

Վլադիմիր Դ. Վարդանյան  
Իրավաբ. գիտ. թեկնածու

## ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ

«Ցեղասպանության հանցագործության կանխարգելման և դրա համար պատժի մասին» ՄԱԿ-ի 1948թ. դեկտեմբերի 9-ի կոնվենցիայի դրույթների կիրառելիության հարցի շուրջ\*

ԻԿԸ փարի. թիվ 1(29), Խունվար-մարտ 2010

Մինչև 1948թ. դեկտեմբերի 9-ի «Ցեղասպանության հանցագործության կանխարգելման և դրա համար պատժի մասին» կոնվենցիայի ընդունումը ցեղասպանությունն արգելող ունիվերսալ (համընդհանուր) միջազգային իրավական համաձայնագիր գոյություն չուներ: Բայց չնայած դրան, ցեղասպանությունը դիտվում էր որպես հանցագործություն՝ համաձայն սովորության միջազգային իրավունքի: ՄԱԿ-ի ստեղծումից անմիջապես հետո վերջինս կենտրոնացրեց իր ջանքերը ցեղասպանությունը կանխարգելելուն և պատժելուն միտված ունիվերսալ միջազգային իրավական հենքի մշակման ուղղությամբ:

ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 1946թ. դեկտեմբերի 11-ի **96(Ը)** բանաձևը դարձավ ՄԱԿ-ի առաջին փաստաթղթերից մեկը: Այն փաստորեն առաջին անգամ փորձեց գրավոր կերպով ձևակերպել ցեղասպանության հանցագործության էությունը՝ վերջինս բնորոշելով որպես «... **ամբողջական մարդկային խմբերի գոյության իրավունքի ճանաչման մերժում, այնպես, ինչպես մարդասպանությունը նշանակում է առանձին մարդկային էակների կյանքի իրավունքի ճանաչման մերժում. գոյության իրավունքի ճանաչման նման մերժումը վիրավորում է մարդկային խիղճը, մեծ վնասներ է պատճառում մարդկությանը, որը գրկվում է այդ մարդկային խմբերի կողմից տրվող մշակութային և այլ արժեքներից, և հակասում է բարոյական օրենքին, Միավորված Ազգերի ոգուն ու նպատակներին**»<sup>1</sup>»:

ՎԵՄ համահայկական հանդես

\* Հոդվածն ընդունվել է տպագրության 15.03.2010:

1 ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 96(Ը) բանաձևի տեքստը բերվում է ըստ «Резолюции, принятые Генеральной Ассамблеей на Второй части Первой сессии с 23 октября по 15 декабря 1946 г.», Нью-Йорк: ООН, 1947, с. 140.

96(I) բանաձևի մշակողները հսկայական ներդրում կատարեցին նաև այն փաստի հաստատման գործում, որ ցեղասպանությունն արգելված էր քննարկվող փաստաթղթերի ընդունումից շատ ավելի վաղ՝ հատուկ մատնանշելով «ցեղասպանության բազմաթիվ հանցագործություններ, երբ ամբողջական կամ մասնակի ոչնչացման ենթարկվեցին ռասայական, կրոնական, քաղաքական և այլ խմբեր», և ավելացնելով, որ «ցեղասպանության հանցագործության համար պատժելը միջազգային կարևորության հարց է<sup>2</sup>»: Ելնելով վերը նշվածից՝ Գլխավոր ասամբլեան եկավ հետևյալ եզրակացությանը. «... ցեղասպանությունը՝ միջազգային իրավունքի տեսանկյունից, հանցագործություն է, որը դատապարտվում է քաղաքակիրթ աշխարհի կողմից և որի կատարման համար մեղավորները և հանցակիցները ենթակա են պատժի, անկախ նրանից, թե նրանք մասնավոր անձինք են, պետական պաշտոնատար անձինք կամ պետական գործիչներ, և անկախ նրանից, թե հանցագործությունը կատարված է կրոնական, ռասայական, քաղաքական կամ որևիցե այլ դրդապատճառով<sup>3</sup>»: Ըստ էության, 96(I) բանաձևն անհրաժեշտ քաղաքական և իրավական հիմք ծառայեց ցեղասպանության մասին կոնվենցիայի մշակման համար:

ՄԱԿ-ի ցեղասպանության մասին կոնվենցիան ընդունվել է 1948թ. դեկտեմբերի 9-ին և ուժի մեջ մտել 1951թ. հունվարի 12-ին: Կոնվենցիայի հիմնական նպատակն էր հաստատել այն փաստը, որ ցեղասպանությունը դիտվում է որպես հանցագործություն՝ համաձայն միջազգային իրավունքի և մեկընդմիջտ ճանաչել ցեղասպանությունն արգելող ընդհանուր միջազգային իրավունքի նորմի գոյության փաստը ու սահմանել կոնվենցիայի բուն էությունը, այն է՝ հստակեցնել և մանրամասնել ընդհանուր միջազգային իրավունքի նորմերով արդեն երկար ժամանակ արգելված, ուստիև պատասխանատվություն ենթադրող արարքը:

Տվյալ եզրահանգումը կոնվենցիայի ուժի մեջ մտնելուն պես հաստատվեց 1951թ. ՄԱԿ-ի Միջազգային դատարանի խորհրդատվական եզրակացության մեջ, որում նշվում էր, որ «Կոնվենցիայի հիմքում ընկած սկզբունքները ճանաչվում են բոլոր քաղաքակիրթ պետությունների կողմից որպես պարտադիր՝ նույնիսկ առանց որևէ կոնվենցիոնալ ամրագրման»<sup>4</sup>:

Ներկայացված խորհրդատվական եզրակացությունը վերջ դրեց ցեղասպանության հանցագործության և ցեղասպանության մասին կոնվենցիայի վերաբերյալ բանավեճերին՝ հաստատելով, որ կոնվենցիայի հիմնարար սկզբունքները պարտադիր են բոլոր պետությունների համար՝ որպես erga omnes պարտավորություններ: Ուստի՝ հայերի դեմ իրագործված ցեղասպանության կապակցությամբ առաջանում է ցեղասպանության մասին կոնվենցիայի հետադարձության «ռետրոակտիվ գործադրման» հիմնախնդիրը: Հիմնվելով առկա միջազգային իրավական պրակտիկայի, Նյուրնբերգի միջազգային ռազմական տրիբունալի որոշումների, Իսրայելում Ադոլֆ Էյխմանի

2 Նույն տեղում:

3 Նույն տեղում:

4 Reservations to the Convention on the Prevention and Punishment of the Crime of Genocide, Advisory Opinion, ICJ Reports (1951) pp. 15-69.. See Diane F. Orentlicher, "Genocide" in Roy Gutman and David Rieff (eds.), Crimes of War, New York 1999, pp. 153-157. Joe Verhoeven, "Le Crime de Gènocide", in Revue belge de droit international, vol XXIV, 1991, pp. 5-26 at 13

դատավարության, ինչպես նաև այն ընդհանուր կանխավարկածի վրա, որ հետադարձություն չթույլատրող նորմը չի տարածվում միջազգային հանցագործությունների վրա՝ հետազոտողների մի ստվար խումբ, ինչպիսիք են Յու. Գ. Բարսեղովը<sup>5</sup>, Շ. Թորիկյանը<sup>6</sup>, Ա. դը Ջայասը<sup>7</sup> և այլք պաշտպանում են մի տեսակետ, համաձայն որի՝ հնարավոր է ցեղասպանության մասին կոնվենցիայի կիրառելիությունը մինչև դրա ուժի մեջ մտնելը կատարված արարքների նկատմամբ:

Այսպես, օրինակ, Ա. դը Ջայասը նշում է, որ «Ցեղասպանության մասին կոնվենցիայի ձևակերպումները ո՛չ բացառում, ո՛չ էլ նախատեսում են դրա հետադարձ կիրառությունը: Այլ կերպ ասած՝ կոնվենցիայի շարադրանքի մեջ չկա ոչինչ, ինչը կարգելեր դրա հետադարձ կիրառությունը: Ի տարբերություն դրա՝ գոյություն ունեն բազմաթիվ միջազգային պայմանագրեր, որոնք ուղղակիորեն ամրագրում են, որ դրանք չեն կիրառվում հետադարձորեն: Օրինակ, 1998թ. Միջազգային քրեական դատարանի կանոնադրության հոդված 11–ը սահմանում է, որ Գատարանին ընդդատյա են միայն սույն Կանոնադրության ուժի մեջ մտնելուց հետո կատարված հանցագործությունները»<sup>8</sup>:

Ըստ Ա. դը Ջայասի՝ «Հատկանշական է, որ Ցեղասպանության մասին կոնվենցիան մշակողները չեն սահմանել, որ այն կիրառվելու է միայն ապագայի համար, թեև նրանք հեշտորեն կարող էին դա անել, եթե մտադրություն ունենային սահմանափակել դրա կիրառման շրջանակը»<sup>9</sup>:

Հետազոտողների մեկ այլ խումբ՝ Ս. Կոչոյ<sup>10</sup>, Գ. Աքթան<sup>11</sup> և այլք, հերքում են մինչև ցեղասպանության մասին կոնվենցիայի ուժի մեջ մտնելը տեղի ունեցած արարքների, մասնավորապես՝ Հայոց ցեղասպանության նկատմամբ կոնվենցիան կիրառելու հնարավորությունը՝ նշելով, որ վերջինս չի կարող դիտվել որպես այդպիսին, քանի որ դրա կատարման ժամանակ ցեղասպանության հանցագործությունն արգելող միջազգային պայմանագիր գոյություն չի ունեցել:

Քննադատության չենթարկելով նշված երկու դիրքորոշումներից ոչ մեկը՝ հարկադրված ենք ընդգծել, որ դրանք ոչ այլ ինչ են, քան ցեղասպանության մասին կոնվենցիայի հետադարձ կիրառելիության վերաբերյալ դոկտրինալ մոտեցումներ, և որևէ իրավական ուժ չեն կարող ունենալ: Անհրաժեշտ է նշել, որ ցայսօր գոյություն չունի որևէ հեղինակավոր պաշտոնական միջազգային իրավական փաստաթուղթ, որը կհաստատեր կամ կմերժեր ցեղասպանության մասին կոնվենցիայի կիրառելիության հնարավորությունը՝ մինչև դրա ուժի մեջ մտնելը տեղի ունեցած արարքների նկատմամբ:

5 Տե՛ս Բարսեղով Կ. Գ. Геноцид армян преступление по международному праву. М.: «XXI век – Согласие». 2000, с. 61-70.

6 Տե՛ս Toriguián Sh. The Armenian Question and International Law. La Verne, Ca: "ULV Press", 1988. p. 33-34.

7 Տե՛ս Alfred de Zayas. Memorandum on the genocide against Armenians 1915-1923 and the application of the 1948 Genocide Convention, p. 7-8.

8 Alfred de Zayas, Memorandum on The Genocide against the Armenians 1915-1923 and the Application of the 1948 Genocide Convention, p. 8 available at <http://www.anca.org/docs/deZayas-fullreport.pdf>

9 Alfred de Zayas, The Genocide against the Armenians 1915-1923 and the relevance of the 1948 Genocide Convention, available at [http://alfreddezayas.com/Law\\_history/armlegopi.shtml](http://alfreddezayas.com/Law_history/armlegopi.shtml)

10 Տե՛ս Кочой С. Геноцид: понятие, ответственность, практика // Уголовное право, 2001, №2, с. 10-12

11 Տե՛ս Gunduz Aktan The Armenian Problem and International Law in Turkkaaya Atoa (ed.) The Armenians in the Late Ottoman Period, Ankara, 2001. pp. 265, 305.

Այսպես, համաձայն ցեղասպանության մասին 1948թ. դեկտեմբերի 9-ի կոնվենցիայի 9-րդ հոդվածի՝ «**Պայմանավորվող կողմերի միջև վեճերը՝ կապված սույն Կոնվենցիայի մեկնաբանման, կիրառման կամ կատարման հետ, ներառյալ նաև ցեղասպանության կամ սույն Կոնվենցիայի III հոդվածում թվարկված որևէ արարք կատարելու համար այս կամ այն պետության պատասխանատվության վերաբերյալ վեճերը, հանձնվում են Արդարադատության միջազգային դատարանի քննությանը՝ վեճի կողմերից յուրաքանչյուրի պահանջով**<sup>12</sup>»: Հետևաբար, համաձայն վերը նշված հոդվածի, կոնվենցիայի դրույթների մեկնաբանությունը ՄԱԿ-ի միջազգային դատարանի բացառիկ իրավասությունն է: Մինչև ՄԱԿ-ի Միջազգային դատարանը վերջնական որոշում չկայացնի նախքան ցեղասպանության մասին կոնվենցիայի ուժի մեջ մտնելը տեղի ունեցած արարքների նկատմամբ դրա կիրառելիության հնարավորության կամ անհնարինության վերաբերյալ, ցանկացած դատողություն կհանդիսանա կոնվենցիայի՝ պարտադիր ուժ չունեցող, դոկտրինալ «**ոչ պաշտոնական**» մեկնաբանություն:

Կոնվենցիայի հետադարձ կիրառելիության հիմնահարցի լուծման համար որոշակի կողմնորոշիչ կարող է հանդիսանալ ՄԱԿ-ի Միջազգային դատարանի պրակտիկան և առաջին հերթին՝ Ցեղասպանության մասին կոնվենցիայի կիրառելիության մասին (Բոսնիան և Հերցեգովինան՝ ընդդեմ Հարավսլավիայի) գործով Նախնական առարկությունների վերաբերյալ դեռևս 1996թ. կայացված որոշումը: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ նշված գործում Հարավսլավիան նախնական առարկություններ էր առաջ քաշել՝ վիճարկելով դատարանի իրավագործությունը, ՄԱԿ-ի Միջազգային դատարանը 1996թ. հունիսի 11-ին տվյալ գործով որոշում ընդունեց, որի շատ դրույթներ խիստ կարևոր են հայերի դեմ իրագործված ցեղասպանության նկատմամբ ցեղասպանության մասին կոնվենցիայի կիրառման հարցը պարզելու համար:

Տվյալ գործով դատարանի իրավագործությունը մերժելուն ուղղված իր նախնական առարկություններում Հարավսլավիան (Մերքիա և Չեռնոգորիա), հիմնվելով այն հանգամանքի վրա, որ «**1992թ. դեկտեմբերի 29-ով թվագրված միանալու (succession) մասին ծանուցումը, որով, այսպես կոչված, Բոսնիայի և Հերցեգովինայի Հանրապետությունը ցանկություն է արտահայտել դառնալու 1948թ. Ցեղասպանության հանցագործության կանխարգելման և դրա համար պատժելու մասին կոնվենցիայի մասնակից, ունի Կոնվենցիային միանալու (accession) ուժ**», պնդում էր, որ «**տվյալ գործով Գատարանն իրավագործություն ունի 1993թ. մարտի 29-ից, և հետևաբար, մինչև այդ ամսաթիվը տեղի ունեցած մեղազգրվող ակտերի կամ փաստերի վերաբերյալ դիմողի հայրը Գատարանի իրավասության տակ չի ընկնում**»<sup>13</sup>:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ նշված նախնական առարկությունը կարող էր մերժվել դատարանի կողմից, Հարավսլավիան, առանց տվյալ առարկությանը խոչընդոտելու, համարել է այն նաև հետևյալ նախնական առարկությամբ. «**Եթե Գիմող պետության՝ 1992թ. դեկտեմբերի 29-ով**

12 «Ցեղասպանության հանցագործության կանխարգելման և դրա համար պատժի մասին» ՄԱԿ-ի 1948թ. դեկտեմբերի 9-ի կոնվենցիայի տեքստը բերվում է ըստ ՄԱԿ-ի Հայաստանյան գրասենյակի պաշտոնական կայքէջի <http://www.un.am/?laid=2&com=module&module=menu&id=60>

13 Application of the Convention on the Prevention and Punishment of the Crime Genocide (Bosnia and Herzegovina v. Serbia and Montenegro) – Judgments – Preliminary Objections – 11 July 1996. Para. 14.

թվագրված միանալու ծանուցումը տվյալ հիմքով ենթադրում է, որ Գ-ինոդ պետությունը 1948թ. Յեղասպանության մասին կոնվենցիայի մասնակից է 1992թ. մարտի 6-ից<sup>14</sup> համաձայն ընդհանուր միջազգային իրավունքի նորմերի, Յեղասպանության հանցագործության կանխարգելման և դրա համար պատժի մասին կոնվենցիան չի գործի կողմերի միջև մինչև 1992թ. դեկտեմբերի 29-ը, ուստի, այն չի ենթադրում Գ-ատարանի իրավագործությունը մինչև 1992թ. դեկտեմբերի 29-ը տեղի ունեցած իրադարձությունների նկատմամբ և, հետևաբար, Գ-ինոդի՝ մինչև 1992թ. դեկտեմբերի 29-ը տեղի ունեցած մեղսագրվող արարքներին և փաստերին վերաբերող դիմումը Գ-ատարանի իրավագործության տակ չի ընկնում»<sup>15</sup>:

Կայացրած որոշման մեջ Գ-ատարանը մերժեց Հարավսլավիայի կողմից մատնանշված առարկությունները, նշելով, որ «Հարավսլավիան, իր դիրքորոշումը հիմնելով իրավական ակտերի անհետադարձության սկզբունքի վրա, իրոք, լրացուցիչ փաստարկ ներկայացրեց առ այն, որ նույնիսկ, եթե Գ-ատարանը Կոնվենցիայի հիման վրա կարող էր իրավագործությամբ օժտված լինել, այն կարող էր գործ ունենալ միայն այն իրադարձությունների հետ, որոնք հաջորդել են տարբեր ամսաթվերին, որոնցից Կոնվենցիան կարող էր Կողմերի համար կիրառելի դառնալ: Այս կապակցությամբ Գ-ատարանն այն տեսակետին է հարում, որ Յեղասպանության մասին կոնվենցիան և, մասնավորապես, հոդված IX-ը չի պարունակում որևիցե դրույթ, որի նպատակը կամ օբյեկտը նման կերպով *ratione temporis* դրա (Գ-ատարանի) իրավագործության սահմանափակումն էր, իր հերթին Կողմերն իրենք չեն կատարել ոչ մի վերապահում այդ նպատակով ո՛չ Կոնվենցիայի վերաբերյալ, ո՛չ էլ Գ-եյթոն-Փարիզյան համաձայնագրի ստորագրման կապակցությամբ: Գ-ատարանը, այսպիսով, եկավ եզրակացության, որ այն տվյալ գործում օժտված է իրավագործությամբ Յեղասպանության մասին կոնվենցիային ուժ տալու առումով Բոսնիայում և Հերցեգովինայում ընթացող ընդհարման սկզբից և եթ տեղի ունեցած պատշաճ փաստերի նկատմամբ: Այս եզրակացությունը, բացի դրանից, համապատասխանում է կոնվենցիայի օբյեկտին և նպատակին, ինչպես դրանք սահմանվել են Գ-ատարանի կողմից 1951թ. ... »<sup>16</sup>:

ԻԿ(Ը) փարի. թիվ 1(29). Խունվար-մարտ 2010

Ինչպես տեսնում ենք, նշված իրավական դիրքորոշումը, ըստ էության, չի բացառում ցեղասպանության մասին 1948թ. կոնվենցիայի հետադարձ կիրառման հնարավորությունը: Այդուհանդերձ, հանուն ճշմարտության, պետք է նշել, որ գոյություն ունի որոշակի տարբերություն նախկին Հարավսլավիայի վերը քննարկված իրավիճակի և Հայոց ցեղասպանության հիմնախնդրի միջև: Նշված օրինակում իրադարձությունները թեև տեղի են ունեցել Բոսնիայի և Հերցեգովինայի համար ցեղասպանության մասին կոնվենցիայի ուժի մեջ մտնելուց առաջ, սակայն 1948թ. դեկտեմբերի 9-ի կոնվենցիայի՝ որպես փաստաթղթի, ուժի մեջ մտնելուց հետո, բացի դրանից, Հարավսլավիայի Սոցիալիստական Ֆեդերատիվ Հանրապետությունը ստորագրել էր Յեղասպանության մասին կոնվենցիան 1948թ. դեկտեմբերի 11-ին և վավերացրել այն՝ 1950թ.

ՎԵՄ համահայկական համոզան

14 Բոսնիայի և Դերցեգովինայի անկախության հռչակման ամսաթիվ:  
15 Application of the Convention on the Prevention and Punishment of the Crime Genocide (Bosnia and Herzegovina v. Serbia and Montenegro) – Judgments – Preliminary Objections – 11 July 1996. Para. 14.  
16 Application of the Convention on the Prevention and Punishment of the Crime Genocide (Bosnia and Herzegovina v. Serbia and Montenegro) – Judgments – Preliminary Objections – 11 July 1996. Para. 34.

օգոստոսի 29-ին<sup>17</sup>:

Հայերի դեմ իրագործված ցեղասպանության հիմնախնդիրը բարդացված է այն հանգամանքով, որ այդ հանցագործության հանցակազմը կազմող արարքները տեղի են ունեցել կոնվենցիայի ընդունումից և ուժի մեջ մտնելուց շատ ավելի վաղ: Կտարածի<sup>18</sup> արդյոք ՄԱԿ-ի Միջազգային դատարանը կոնվենցիայի հետադարձ կիրառելիության հնարավորության վերաբերյալ նշված իրավական դիրքորոշումը մինչև կոնվենցիայի ընդունումը կամ ուժի մեջ մտնելը տեղի ունեցած արարքների վրա: Հարցի լուծումը կախված է բացառապես ՄԱԿ-ի Միջազգային դատարանից: Այնուամենայնիվ, չափազանց հետաքրքրական է այն, որ Բոսնիան և Հերցեգովինան՝ ընդդեմ Հարավսլավիայի գործով ցեղասպանության մասին կոնվենցիայի հետադարձ կիրառելիության օգտին արտահայտվել են Միջազգային դատարանի 15 անդամներից 14-ը: Դեմ է քվեարկել միայն Հարավսլավիայի կողմից հրավիրված **ad hoc**<sup>18</sup> դատավոր Կրեչան:

Ելնելով նշվածից՝ գտնում ենք, որ այսօր հնարավոր չէ միանշանակ դրական կամ բացասական պատասխան տալ կոնվենցիայի հետադարձ ուժի հարցի վերաբերյալ: Կարելի է միայն վստահորեն նշել, որ ո՛չ կոնվենցիայի դրույթներում, ո՛չ էլ դրա նախապատրաստման փաստաթղթերում ոչինչ չի ենթադրում կամ բացառում դրան հետադարձ ուժ հաղորդելը: Անհրաժեշտ ենք համարում նաև նշել, որ մի շարք հեղինակներ հարում են այն տեսակետին, որ ցեղասպանության մասին կոնվենցիան կիրառելի է հայերի դեմ իրագործված ցեղասպանության նկատմամբ, քանի որ այդ հանցագործությունը դեռ շարունակվում է, այսինքն՝ չեն վերացվել դրա հետևանքները, քանի որ դեռևս շարունակվում են հայ ազգի ձուլման (ասիմիլյացիայի), մշակութային արժեքների՝ հուշարձանների, եկեղեցիների և այլն ոչնչացման գործընթացները<sup>19</sup>:

Անկախ նրանից՝ ցեղասպանության մասին կոնվենցիան ունի հետադարձ ուժ, թե ոչ, ցեղասպանության հանցագործությունը, ինչպես արդեն նշվեց, դիտվում է որպես ժամանակակից ընդհանուր միջազգային իրավունքի իմպերատիվ նորմից բխող պարտավորության լուրջ խախտում և պատժելի է՝ անկախ որևէ կոնվենցիոնալ պարտավորության: **Հակառակ դեպքում, ոչ միայն մինչև ցեղասպանության մասին կոնվենցիայի ուժի մեջ մտնելը կատարված ցեղասպանական արարքները, այլ նաև կոնվենցիայի մասնակից չհանդիսացող պետությունների տարածքներում կատարված արարքները չեն կարող պատժելի դիտվել:** Կարծում ենք՝ այսօր գրեթե ոչ ոք չի պաշտպանի նման անտրամաբանական դատողությունը:

17 Տե՛ս United Nations, Treaty Series, vol. 78, p. 277.

18 Մեկ դեպքի համար:

19 Տե՛ս S. Toriguian, The Armenian Question and International Law. La Verne, Ca: "ULV Press", 1988. pp. 33-34.

**Summary**

**THE ARMENIAN GENOCIDE:**

On the Applicability of the Fundamental Tenets of the “Convention on the Prevention and Punishment of the Crime of Genocide“ adopted by UN on December 9, 1948

*Vladimir D. Vardanyan*

The article is dedicated to the issues of applicability of the 1948 UN Genocide Convention to the events constituting the Armenian Genocide. The international legal development of the prohibition of the crime of genocide in the framework of the United Nations is one of the focal aspects of the paper.

Having analyzed the controversial points of view on possibility of the retroactive application of the Genocide Convention author comes to the conclusion that there is no official position on that matter. The issue of retroactive application of the Genocide Convention as an issue of legal interpretation is exclusively under the jurisdiction of the International Court of Justice in accordance with Article IX of the Convention. Since there is no Court jurisprudence on the issue of its retroactive application, any statement for or against its retroactivity will remain non binding and disputable.